

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

« ____ » _____ 2022թ.

N ____ - Ա

ՈՐՈՇՈՒՄ

**ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով՝

1. Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1) Հաստատել Երևանի ենթակայության «Նոր Արաբկիր» առողջության կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Հաստատել Երևանի ենթակայության «Նոր Արեշ» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն N 2 հավելվածի:

3) Հաստատել Երևանի ենթակայության «Թիվ 4 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն N 3 հավելվածի:

4) Հաստատել Երևանի ենթակայության «Թիվ 13 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն N 4 հավելվածի:

5) Հաստատել Երևանի ենթակայության «Թիվ 17 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն N 5 հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐԱԶՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի մայիսի 24-ի «Երևանի ենթակայության մի շարք բաժնետիրական ընկերությունների վերակազմակերպման մասին հ.599-Ա որոշման համաձայն՝

1) Երևանի ենթակայության «Թիվ 1 պոլիկլինիկա», «Թիվ 5 պոլիկլինիկա» և «Քաղաքային էնդոկրին դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերությունները վերակազմակերպել՝ միացնելով «Թիվ 4 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը,

2) Երևանի ենթակայության «Արաբկիր մանկական պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել՝ միացնելով «Նոր Արաբկիր» առողջության կենտրոն փակ բաժնետիրական ընկերությանը,

3) Երևանի ենթակայության «Սարի Թաղ» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել՝ միացնելով «Թիվ 17 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը,

4) Երևանի ենթակայության «Նորագավիթ պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել՝ միացնելով «Թիվ 13 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը,

5) Երևանի ենթակայության «Նուբարարշեն» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել՝ միացնելով «Նոր Արեշ» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը:

Երևանի քաղաքապետի 2022 թվականի հուլիս 7-ի հ.2715-Ա որոշմամբ հաստատվել են վերոնշյալ 1-5 կետերում նշված փակ բաժնետիրական ընկերությունների միացման պայմանագրերը, Երևանի քաղաքապետի 2022 թվականի օգոստոսի 18-ի համապատասխանաբար հ.3020-Ա, հ.3022-Ա, հ.3023-Ա, հ.3024-Ա և հ.3025-Ա որոշումներով հաստատվել են նշված բաժնետիրական ընկերությունների հաշվապահական հաշվեկշիռները, տեղաբաշխված բաժնետոմսերի շուկայական արժեքները, այդ ընկերությունների վերակազմակերպման կարգը, վերջիններիս կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի փոխարկման կարգը, Երևանի քաղաքապետի 2022 թվականի օգոստոսի 19-ի համապատասխանաբար հ.3040-Ա, հ.3041-Ա, հ.3042-Ա, հ.3043-Ա և հ.3044-Ա որոշումներով հաստատվել են միավորվող փակ բաժնետիրական ընկերությունների գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ՝ վիճարկվող) պարտավորությունների միացվող ընկերությանը փոխանցման ակտերը, և Երևանի քաղաքապետի 2022 թվականի օգոստոսի 24-ի համապատասխանաբար հ.3080-Ա, հ.3081-Ա, հ.3082-Ա, հ.3083-Ա և հ.3084-Ա որոշումներով հաստատվել են «Նոր Արաբկիր» առողջության կենտրոն, «Նոր Արեշ» պոլիկլինիկա», «Թիվ 4 պոլիկլինիկա», «Թիվ 13 պոլիկլինիկա» և

«Թիվ 17 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունների կանոնադրական կապիտալի չափերը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտություն է առաջացել հաստատել Երևանի ենթակայության «Նոր Արաբկիր» առողջության կենտրոն, «Նոր Արեշ» պոլիկլինիկա», «Թիվ 4 պոլիկլինիկա», «Թիվ 13 պոլիկլինիկա» և «Թիվ 17 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՀՐԱԶՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Երևանի ենթակայության մի շարք բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունների փոփոխությունները հաստատելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Երևանի ենթակայության մի շարք բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունների փոփոխությունները հաստատելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 1
Կազմված է 01.08.2022 թ. և բաղկացած է 2 թերթից
Տպագրված է ընդամենը 3 օրինակ
ՕՐԻՆԱԿ _____

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

Երևան քաղաքի ավագանու
_____._____ 2022 թ.
թիվ _____ որոշմամբ

Երևանի քաղաքապետ՝

_____ ՀՐԱՋՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 25.11.2004 թ.
գրանցման համար՝ 264.120.07025
հարկ վճարողի հաշվառման համար՝
00088132
25.11.2004 թ. գրանցված կանոնադրության
թիվ _____ փոփոխությունը գրանցված
է իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կողմից “_____” _____ 2022
թ.

Աշխատակից՝

«ՆՈՐ ԱՐԱԲԿԻՐ» ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

փակ բաժնետիրական ընկերության

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(փոփոխություն)

«ՆՈՐ ԱՐԱԲԿԻՐ» ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1. Կանոնադրության 1.1. կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ պարբերություններով.

«Ընկերությունը Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի մայիսի 24-ի «Երևանի ենթակայության մի շարք բաժնետիրական ընկերությունների վերակազմակերպման մասին» թիվ 599-Ա որոշման համաձայն վերակազմակերպվել է՝ «ԱՐԱԲԿԻՐ ՄԱՆԿԱԿԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» փակ բաժնետիրական ընկերությունը (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 04.07.2012 թ., պետական գրանցման համարը՝ 222.120.121235, հարկ վճարողի հաշվառման համար՝ 00115079) նրան միացման ճանապարհով և հանդիսանում է նրա իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:

«ԱՐԱԲԿԻՐ ՄԱՆԿԱԿԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» փակ բաժնետիրական ընկերության իրավանախորդն է «ՔԱՆԱՔԵՌ-ՉԵՅԹՈՒՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ փակ բաժնետիրական ընկերությունը (գրանցման թիվ՝ 222.120.00271, հարկ վճարողի հաշվառման համար՝ 01002597, առանձնացում):

«ՔԱՆԱՔԵՌ-ՉԵՅԹՈՒՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ փակ բաժնետիրական ընկերության իրավանախորդներն են (միաձուլում).

- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Լ. Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՍՐՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ (գրանցման թիվ՝ 264.140.01666),
- Երևանի քաղաքապետարանի «ԹԻՎ 8 ԲՈՒԺՄԻԱՎՈՐՈՒՄ» ԱՊՓԲԸ (գրանցման թիվ՝ 264.140.02473),
- Երևանի քաղաքապետարանի «ՉԵՅԹՈՒՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ (գրանցման թիվ՝ 222.120.00126),
- Երևանի քաղաքապետարանի «ԹԻՎ 11 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ԱՊՓԲԸ (գրանցման թիվ՝ 264.140.01369),
- Երևանի քաղաքապետարանի «ԱՐԱԲԿԻՐ» ՄԱՆԿԱԿԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ԱՊՓԲԸ (գրանցման թիվ՝ 264.140.02459),
- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ն. Բ. ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻԳԻԵՆԱՅԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊՈԱԿ (գրանցման թիվ՝ 282.210.04702) և
- Երևանի քաղաքապետարանի «ԹԻՎ 16 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ԱՓԲԸ (գրանցման թիվ՝ 222.120.00055):»:

2. Կանոնադրության 4.2. կետը կարդալ հետևյալ խմբագրությամբ.

«4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է **92,560,000** (իննսուններկու միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար) դրամ, որը կազմում է 9,256 հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 10,000 դրամ:

Բոլոր 9,256 բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետության Երևան համայնքին և լրիվ վճարված են նրա կողմից:»:

Հավելված N 2
Կազմված է 01.08.2022 թ. և բաղկացած է 2 թերթից
Տպագրված է ընդամենը 3 օրինակ
ՕՐԻՆԱԿ _____

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

Երևան քաղաքի ավագանու
_____ 2022 թ.
թիվ _____ որոշմամբ

Երևանի քաղաքապետ՝

_____ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ **02.08.2012 թ.**
գրանցման համար՝ **222.120.130373**
հարկ վճարողի հաշվառման համար՝
00458201
02.08.2012 թ. գրանցված կանոնադրության
թիվ _____ փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
կողմից “_____” _____ 2022 թ.

Աշխատակից՝

«ՆՈՐ ԱՐԵՇ» ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ»

փակ բաժնետիրական ընկերության
Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
(փոփոխություն)

«ՆՈՐ ԱՐԵՇ» ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1. Կանոնադրության 1.1. կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ պարբերություններով.

«Ընկերությունը Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի մայիսի 24-ի «Երևանի ենթակայության մի շարք բաժնետիրական ընկերությունների վերակազմակերպման մասին» թիվ 599-Ա որոշման համաձայն վերակազմակերպվել է՝ «ՆՈՒԲԱՐԱՇԵՆ» ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» փակ բաժնետիրական ընկերությունը (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 02.08.2012 թ., պետական գրանցման համարը՝ 222.120.130375, հարկ վճարողի հաշվառման համար՝ 00458236) նրան միացման ճանապարհով և հանդիսանում է նրա իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:

«ՆՈՒԲԱՐԱՇԵՆ» ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» փակ բաժնետիրական ընկերության իրավանախորդն է (առանձնացում) «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերությունը (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 19.03.2004 թ., գրանցման թիվ՝ 222.120.00274, հարկ վճարողի հաշվառման համար՝ 00441242):

«ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության իրավանախորդներն են (միաձուլում).

- Երևանի քաղաքապետարանի «ԹԻՎ 1 ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԾՆՆԴԱՏՈՒՆ» ԱՊՓԲԸ (գրանցման թիվ՝ 278.140.01491),
- Երևանի քաղաքապետարանի «ԹԻՎ 2 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ԱՊՓԲԸ (գրանցման թիվ՝ 278.140.01004),
- Երևանի քաղաքապետարանի «ԹԻՎ 10 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ԱՊՓԲԸ (գրանցման թիվ՝ 278.140.01490),

Երևանի քաղաքապետարանի «ԹԻՎ 21 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ԱՊՓԲԸ (գրանցման թիվ՝ 278.140.01476):»:

2. Կանոնադրության 4.2. կետը կարդալ հետևյալ խմբագրությամբ.

«Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է **11,620,000** (տասնմեկ միլիոն վեց հարյուր քսան հազար) դրամ, որը կազմում է 2,905 հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 4,000 դրամ:

Բոլոր 2,905 բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետության Երևան համայնքին և լրիվ վճարված են նրա կողմից:»:

Հավելված N 3
Կազմված է 04.08.2022 թ. և բաղկացած է 2 թերթից
Տպագրված է ընդամենը 3 օրինակ
ՕՐԻՆԱԿ _____

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

Երևան քաղաքի ավագանու
_____ 2022 թ.
թիվ _____ որոշմամբ

Երևանի քաղաքապետ՝
_____ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ **08.06.1995 թ.**
գրանցման համար՝ **273.140.00891**
հարկ վճարողի հաշվառման համար՝
01505616
04.06.2010 թ. գրանցված կանոնադրության
թիվ _____ փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
կողմից “_____” _____ 2022 թ.

Աշխատակից՝

«ԹԻՎ 4 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ»

փակ բաժնետիրական ընկերության
Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
(փոփոխություն)

«ԹԻՎ 4 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1. Կանոնադրության 1.2. կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ պարբերություններով.

«Ընկերությունը Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի մայիսի 24-ի «Երևանի ենթակայության մի շարք բաժնետիրական ընկերությունների վերակազմակերպման մասին» թիվ 599-Ա որոշման համաձայն վերակազմակերպվել է՝ «ԹԻՎ 1 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» փակ բաժնետիրական ընկերությունը (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 16.03.1996 թ., պետական գրանցման համարը՝ 286.140.01978, հարկ վճարողի հաշվառման համար՝ 02511684), «ԹԻՎ 5 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» փակ բաժնետիրական ընկերությունը (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 12.03.1996 թ., պետական գրանցման համարը՝ 273.140.01322, հարկ վճարողի հաշվառման համար՝ 01508974) և «ՔԱՂԱՔԱՅԻՆ ԷՆԴՈԿՐԻՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» փակ բաժնետիրական ընկերությունը (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 07.03.1996 թ., պետական գրանցման համարը՝ 264.140.02366, հարկ վճարողի հաշվառման համար՝ 00015625) նրան միացման ճանապարհով և հանդիսանում է նրանց իրավահաջորդը՝ փոխանցման ակտերին համապատասխան:

«ԹԻՎ 1 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է Երևանի քաղաքապետի 25.02.1998 թ. թիվ 68 որոշման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի «ԹԻՎ 1 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» առողջապահական պետական ձեռնարկության վերակազմավորման միջոցով և հանդիսանում է վերջինիս իրավահաջորդը:

«ԹԻՎ 5 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է Երևանի քաղաքապետի 25.02.1998 թ. թիվ 65 որոշման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի «ԹԻՎ 5 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» առողջապահական պետական ձեռնարկության վերակազմավորման միջոցով և հանդիսանում է վերջինիս իրավահաջորդը:

«ՔԱՂԱՔԱՅԻՆ ԷՆԴՈԿՐԻՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է Երևանի քաղաքապետի 25.02.1998 թ. թիվ 105 որոշման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի «ՔԱՂԱՔԱՅԻՆ ԷՆԴՈԿՐԻՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» առողջապահական պետական ձեռնարկության վերակազմավորման միջոցով և հանդիսանում է վերջինիս իրավահաջորդը:»:

2. Կանոնադրության 4.2. կետը կարդալ հետևյալ խմբագրությամբ.

«4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է **28,390,809** (քսանութ միլիոն երեք հարյուր իննսուն հազար ութ հարյուր ինը) դրամ, որը կազմում է 19,757 հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1,437 դրամ:

Բոլոր 19,757 բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետության Երևան համայնքին և լրիվ վճարված են նրա կողմից:»:

Հավելված N 4
Կազմված է 01.08.2022 թ. և բաղկացած է 2 թերթից
Տպագրված է ընդամենը 3 օրինակ
ՕՐԻՆԱԿ _____

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

Երևան քաղաքի ավագանու
_____ 2022 թ.
թիվ _____ որոշմամբ

Երևանի քաղաքապետ՝
_____ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ **04.03.1996 թ.**
գրանցման համար՝ **269.140.01112**
հարկ վճարողի հաշվառման համար՝
02205217
27.05.2010 թ. գրանցված կանոնադրության
թիվ _____ փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
կողմից “_____” _____ 2022 թ.

Աշխատակից՝

«ԹԻՎ 13 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ»

փակ բաժնետիրական ընկերության
Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
(փոփոխություն)

«ԹԻՎ 13 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1. Կանոնադրության 1.2. կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ պարբերություններով.

«Ընկերությունը Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի մայիսի 24-ի «Երևանի ենթակայության մի շարք բաժնետիրական ընկերությունների վերակազմակերպման մասին» թիվ 599-Ա որոշման համաձայն վերակազմակերպվել է՝ «ՆՈՐԱԳԱՎԻԹ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» փակ բաժնետիրական ընկերությունը (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 01.04.1996 թ., պետական գրանցման համարը՝ 269.140.01144, հարկ վճարողի հաշվառման համար՝ 02203563) նրան միացման ճանապարհով և հանդիսանում է նրա իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:

«ՆՈՐԱԳԱՎԻԹ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է Երևանի քաղաքապետի 02.03.1998 թ. թիվ 118 որոշման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի «ՆՈՐԱԳԱՎԻԹ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» առողջապահական պետական ձեռնարկության վերակազմավորման միջոցով և հանդիսանում է վերջինիս իրավահաջորդը:»:

2. Կանոնադրության 4.2. կետը կարդալ հետևյալ խմբագրությամբ.

«4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է **13,262,425** (տասներեք միլիոն երկու հարյուր վաթսուներկու հազար չորս հարյուր քսանհինգ) դրամ, որը կազմում է 1,663 հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 7,975 դրամ:

Բոլոր 1,663 բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետության Երևան համայնքին և լրիվ վճարված են նրա կողմից:»:

Հավելված N 5
Կազմված է 01.08.2022 թ. և բաղկացած է 2 թերթից
Տպագրված է ընդամենը 3 օրինակ
ՕՐԻՆԱԿ _____

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

Երևան քաղաքի ավագանու
_____. _____ 2022 թ.
թիվ _____ որոշմամբ

Երևանի քաղաքապետ՝

_____ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ **25.11.2004 թ.**
գրանցման համար՝ **264.120.07025**
հարկ վճարողի հաշվառման համար՝
00088132
25.11.2004 թ. գրանցված կանոնադրության
թիվ _____ փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
կողմից “_____” _____ 2022 թ.

Աշխատակից՝

«ՆՈՐ ԱՐԱԲԿԻՐ» ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
փակ բաժնետիրական ընկերության
Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
(փոփոխություն)

«ՆՈՐ ԱՐԱԲԿԻՐ» ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1. Կանոնադրության 1.1. կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ պարբերություններով.

«Ընկերությունը Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի մայիսի 24-ի «Երևանի ենթակայության մի շարք բաժնետիրական ընկերությունների վերակազմակերպման մասին» թիվ 599-Ա որոշման համաձայն վերակազմակերպվել է՝ «ԱՐԱԲԿԻՐ ՄԱՆԿԱԿԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» փակ բաժնետիրական ընկերությունը (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 04.07.2012 թ., պետական գրանցման համարը՝ 222.120.121235, հարկ վճարողի հաշվառման համար՝ 00115079) նրան միացման ճանապարհով և հանդիսանում է նրա իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:

«ԱՐԱԲԿԻՐ ՄԱՆԿԱԿԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» փակ բաժնետիրական ընկերության իրավանախորդն է «ՔԱՆԱՔԵՌ-ՉԵՅԹՈՒՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ փակ բաժնետիրական ընկերությունը (գրանցման թիվ՝ 222.120.00271, հարկ վճարողի հաշվառման համար՝ 01002597, առանձնացում):

«ՔԱՆԱՔԵՌ-ՉԵՅԹՈՒՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ փակ բաժնետիրական ընկերության իրավանախորդներն են (միաձուլում).

- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Լ. Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՍՐՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ (գրանցման թիվ՝ 264.140.01666),
- Երևանի քաղաքապետարանի «ԹԻՎ 8 ԲՈՒԺՄԻԱՎՈՐՈՒՄ» ԱՊՓԲԸ (գրանցման թիվ՝ 264.140.02473),
- Երևանի քաղաքապետարանի «ՉԵՅԹՈՒՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ (գրանցման թիվ՝ 222.120.00126),
- Երևանի քաղաքապետարանի «ԹԻՎ 11 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ԱՊՓԲԸ (գրանցման թիվ՝ 264.140.01369),
- Երևանի քաղաքապետարանի «ԱՐԱԲԿԻՐ» ՄԱՆԿԱԿԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ԱՊՓԲԸ (գրանցման թիվ՝ 264.140.02459),
- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ն. Բ. ՀԱԿՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻԳԻԵՆԱՅԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊՈԱԿ (գրանցման թիվ՝ 282.210.04702) և
- Երևանի քաղաքապետարանի «ԹԻՎ 16 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ԱՓԲԸ (գրանցման թիվ՝ 222.120.00055):»:

2. Կանոնադրության 4.2. կետը կարդալ հետևյալ խմբագրությամբ.

«4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է **92,560,000** (իննսուներկու միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար) դրամ, որը կազմում է 9,256 հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 10,000 դրամ:

Բոլոր 9,256 բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետության Երևան համայնքին և լրիվ վճարված են նրա կողմից:»: